ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի հայրենակիցներ

Ամանորը այն սահմանագիծն է, որտեղ կանգնում ենք՝ գնահատելու անցած ճանապարհը, ամրապնդելու մեզ միավորող արժեքները և վստահորեն նայելու դեպի առաջ:
2025 թվականը մեր համայնքի համար եղավ գործունեության ակտիվ շրջան, երբ ձեզ հետ միասին, համատեղ ուժերով կարողացանք իրականացնել մի շարք կարևոր ծրագրեր: Շարունակեցինք բարելավել համայնքի ենթակառուցվածքները, աջակցել կրթական ու մշակութային նախաձեռնություններին, խթանել երիտասարդական ծրագրերը: Ձեր աջակցությունն ու վստահությունն էին, որ մեզ թույլ տվեցին դժվարությունները հաղթահարել՝ հիմք ստեղծելով նոր ծրագրերի ու նախաձեռնությունների համար :
Սիրելի՛ բնակիչներ,Ձեզանից յուրաքանչյուրի ներդրումն այս տարվա հաջողությունների մեջ անգնահատելի է: Հենց ձեր համբերատարությունը, աջակցությունն ու համայնքային հոգատար վերաբերմունքն են, որ ուժ են տալիս շարունակելու առօրյա ողջ հասարակական աշխատանքը՝ համախմբված, նպատակասլաց ու արժանապատիվ:
Այսօր, դիմավորելով 2026 թվականը, ուզում եմ ընտանիքներից յուրաքանչյուրին մաղթել խաղաղություն, ապահովություն, առողջություն և բարեկեցություն: Թող ձեր օջախներում մշտապես վառվի ջերմության ու սիրո լույսը, իսկ ձեր սրտերում՝ հավատը վաղվա օրվա հանդեպ: Թող համայնքիս յուրաքանչյուր տանը լինի մանկան ծիծաղ, հայրենիքում՝ խաղաղություն, մեր բոլորի կյանքում՝ բարօրություն ու ստեղծագործ ոգի: Թող գալիք տարին մեզ բոլորիս պարգևի նոր ուժ, միասնականություն և անսպառ հավատ:Թող Նոր տարին իր հետ բերի կատարված ցանկություններ, իրականացված ծրագրեր և լուսավոր օրեր: Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: Թող Աստծո խաղաղությունն ու օրհնությունը լինեն ձեր ընտանիքներում և համայնքի բոլոր անկյուններում: